



Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽՕՐԻՆԱԿԸ\*

### 7. ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԵՆԱԳԻՐ ՀՈՒՆԱՐԵՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես հայերեն թարգմանության, այնպես նաև նրա նախօրինակի բնագրական քննության համար կարևոր է պարզել, թե որ հունարեն խմբագրությունից է ծագում հայերեն բնագիրը: Ա. Ռալֆսը սաղմոսների իր օգտագործած հունարեն ձեռագրերը և օժանդակ թարգմանական բնագրերը բաժանել է վեց խմբի՝ արևմտյան, վերինեգիպտական, ստորինեգիպտական, որոգինյան, լուկիանյան և խառը: Ընդ որում, ակնհայտ բնագրական առանձնահատկություններով իրարից տարբերվում են միայն առաջին հինգ խմբերը: Վերջինը հրատարակչի իսկ վկայությամբ հարում է լուկիանյան խմբագրությանը<sup>60</sup>: Ուշագրավ է, որ խմբագրություններից ոչ մեկն էլ միասնական չէ, այսինքն հաճախ իրար հակադրվում են միևնույն խմբի ձեռագրերը: Այս հանգամանքը թեև դժվարացնում է հայերեն թարգմանության սկզբնագիր-խմբագրության բացահայտումը, այնուամենայնիվ էլք գտնել հնարավոր է: Ամենապարզ միջոցը, ըստ երևույթին, հավելյալ հատվածների համեմատությունն է: Սակայն նախքան դրան անցնելը նշենք հունարեն խմբագրությունների պայմանական հապավումները. Ա—արևմտյան, Վ—վերինեգիպտական, Ս—ստորինեգիպտական, Ռ—որոգինյան, Լ—լուկիանյան, Խ—խառը, Պ—Պեշիտտա<sup>60</sup>:

ԺԳ, 1. Հայ=ԼԽ\* Պ. չիք «ոչ ոք է մինչև ի մի»:  
ԺԳ, 3=Լ Խ Պ. չիք «գերեզման բաց է կոկորդ, նոցա, լեզուք իրևանց նեղատրք Լոնն: Թոյնք իծից ի ներքոյ շրթանց նոցա. որոց բերանք անիծիք և դառնութեամբ լի են: Երազ են ոտք նոցա հեղուլ զարիւն: Բեկումն և թշուառութիւն ի ճանապարհս նոցա: Եւ զճանապարհն խաղաղութեան ոչ ծանեան: Ոչ է երկեղ առաջի աչաց նոցա» (հմմտ. Հոովմ. Գ, 13—18)<sup>61</sup>:

ԺԷ, 14=Ռ Լ\* Պ. «Որոտաց Տեր յերկնից և բարձրեայն ետ զձայն իր ի կարկուտ և ի կաշձակումս հոտր»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ԺԸ, 20=Ռ\* Լ Պ. չիք «Փրկեսցէ զիս ի թշնամեաց իմոց հզորաց և յատկեաց իմոց»:

ԻԱ, 26=Ա Լ Խ\* Պ. «Ի քէն է գովութիւն իմ, յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ԻԲ, 14=Վ\* Ս\* Ա\* Ռ\* Լ Խ\* Պ. չիք «և անուն Տեսուն երկիդածաց իւրոց»:

\* Աստղանիշով հղվում են այն դեպքերը, երբ հայերեն թարգմանությունը համընկնում է որևէ խմբագրության միայն մի ձեռագրի:

<sup>61</sup> Թեև ոսկանյան Աստվածաշնչում այս հատվածը կա, սակայն բացահայտորեն ավելացված է հրատարակչի կողմից: Այդ է վկայում Ոսկանի թողած լուսանցագրությունը իր հրատարակության հիմք-ձեռագրի՝ Մատենադարանի № 180 Աստվածաշնչի 289թ թերթում. տե՛ս Ա. Քոլանջյան, Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը և ոսկանյան հրատարակությունը, «Լ՛ջմիածին», 1966, ԺԱ—ԺԲ, էջ 123—124:

\* Ծարունակված «Լ՛ջմիածին» ամսագրի 1975 թվականի №№ Ա և Դ-ից:

<sup>59</sup> Rahlfs, S. 70.

<sup>60</sup> Վերջինս նշում ենք, քանի որ, ինչպես հետագայում կտեսնենք, նույնպես առնչվում է հայերեն թարգմանության հետ:

ԻԵ, 1=Ռ\* ՎԻ կատարած. սաղմոս ի Դատիթ: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ԼԷ, 21=Ս Ա\* Ռ\* Լ Խ\* Պ. չիք «և ընկեց զիս գսի-րելիս որպէս գնեռակ սղծեալ»:

ՍԱ, 10=Ս Ո Լ Խ Պ. չիք «ընդէ՛ր մերծեցեր զիս»: ԾԲ, 2=Ս Ա\* Ռ\* Լ Խ Պ. չիք «ոչ որ է մինչև ի մի»: Հմմտ. ԺԳ, 1:

ՄԵ, 13=Ս\* Ա Լ Խ. «Փրկեցեր զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ յարտասուաց»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ԿԱ, 9=Ա (՞) Ո Պ. «զի Աստուած օգնական է մեր յախտեանս ժամանակաց»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ԿԶ, 2=Ս Ա Ռ\* Լ Խ\*. «Աստուած, ողորմեա մեզ և օրհնեա զմեզ, երևեց զերեսս քո ի մեզ և ողորմեա մեզ»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ԿԺ, 2=Ս Ա Ռ\* Լ Խ\* Պ. «Աստուած, յօգնել ինձ նալեա, և Տէր, յընկերել ինձ փութա»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

Հ, 21=Ս Ա Լ Խ. «Յանախեցեր ի զօրութիսնս քո, դարձար և մխիթարեցեր զիս, և ի խորոց երկրէ միտանգամ հաներ զիս»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՀԱ, 19=Ո Պ. չիք «և յախտեանս յախտենից»:

ՀԶ, 9=Վ\* Լ Խ Պ. «Կամ ի սպա՞ն արգելցէ զողորմութիսն իր յինէն, կամ կատարեալ՞ց զքան իր ազգէ մինչև յազգ»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

Ձ, 1=Վ\* Ա\* և Եթովպ. թարգմ. «Ի կատարած. վասն ինձնանաց. սաղմոս յԱսափ. հինգերորդ շաբաթոց»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

Ձ, 9=Ռ\* Լ Խ. չիք «և ասեմ քեզ»:

ՁԺ, 17=Ս\* Ա\* Ռ\* Լ Խ Պ. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր. զգործս ձեռաց մերոց աջողեա ի մեզ»: Ընդգծվածը չիք Վ խմբագրության մեջ:

ՂԱ, 10=Ս\* Ա Ռ\* Լ Խ\* Պ. «Զի ահա թշնամիք քո, Տէր, զի ահա թշնամիք քո կորիցեն»: Ընդգծվածը չիք Վ խմբագրության մեջ:

ՂԲ, 3=Ո Լ Խ Պ. «Ամբարձան զետք ի Տէր, և համբարձին զետք զձայնս իրեանց. յարիցեն զետք ի զնացս իրեանց»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՂԳ, 23=Ա Լ Խ Պ. «Հատուցէ նոցա Տէր ըստ անօրէնութեան նոցա, ըստ չարութեան նոցա կործանեցէ զնոսա Տէր Աստուած մեր»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՂԴ, 4=Վ\* Ա\* Ռ\* Լ Խ Պ. չիք «զի ոչ մերժէ Տէր զժողովորդ իր»:

ՂԷ, 9=Ա Լ Խ Պ. «Լերինք ցնձասցեն առաջի Տեսան, զի զայ և հասեալ է Տէր ի դատել զերկիր»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՃԳ, 1=Լ. «Սաղմոս ի Դատիթ. ի վերայ աշխարհազործ արարածոց»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՃԷ, 3=Ս\* Ռ\* Ա\* Լ Խ Պ. «Զարթիք փառք իմ, զարթիք սաղմոսիք և օրհնութեամբ»: Ընդգծվածը չիք Վ խմբագրության մեջ:

ՃԺԱ, 1=Ա Ռ\* Լ. «Ալէլուիա. ի վերայ ապաշխարութեան. Անգեայ և Զաքարիայ»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՃԺԵ, 14=Ռ\* Լ Խ\* Պ. «Ջաղօթս իմ Տեսան տաց՝ առաջի ամենայն ժողովրդեան նորա» չիք մյուս խմբագրություններում:

ՃԺԸ, 17=Ռ\* Լ Խ. «Հարեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ օրհնութեան, և զանուն Տեսան կարդացից»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՃԺԸ, 56=Խ\*. «Սա եղև ինձ ճանապարհ ի կեանքս, զի զարդարութիսնս քո խնդրեցի»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՃԺԸ, 104=Վ\* Ս Ա Լ\* Խ. «Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ առեցի զամենայն ճանապարհս չարաց, զի դու օրէնագետ արարեր զիս»: Ընդգծվածը չիք Ո խմբագրության մեջ և Պեշիտտայում:

ՃԼԴ, 17=Ս\* Ռ\* Ա\* Լ Խ\* Պ. չիք «Բունչս ունին և ոչ հոտոսին: Չնոս ունին և ոչ շօշափեն, ոտս ունին և ոչ գնան, և ոչ գոյ բարբառ ի կոկորդս նոցա» (հմմտ. ԾԺԳ, 6—7):

ՃԼԵ, 16=Ս\* Ռ\* Ա\* Լ Խ Պ. չիք «Ո ևճան ջուր յապատած վիմէ, զի յախտեան է ողորմութիսն նորա» (հմմտ. Բ. Օր. Ը, 15):

ՃԼԵ, 26=Ս\* Ա Լ Խ Պ. չիք «Խոստովան եղերոք Տեսան տերանց, զի յախտեան է ողորմութիսն նորա»:

ՃԼԶ, 1=Լ. «Ի Դատիթ. ի ձեռն Երեմիայի. աննշան չեքպայեցոցն»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

ՃԽԴ, 6=Վ\* Ա Ռ\* Լ Խ Պ. չիք «և զօրութիսնս քո պատմեցեն» (հմմտ. ՃԽԴ, 11):

ՃԽԶ, 8=Ս Ա Ռ\* Լ Խ. «Զգեցոց զերկիսնս ամպովք, պատրաստ արար զանձրև իր յերկիր: Բուռոց զխտ ի յերինս, զդպարի ծառայութիսն մարդկան»: Ընդգծվածը չիք Վ խմբագրության մեջ և Պեշիտտայում:

ՃԽԺ, 1=Ա Լ. «Ալէլուիա. Անգեայ և Զաքարիայ»: Ընդգծվածը չիք մյուս խմբագրություններում:

Բազմաթիվ են այն դեպքերը, երբ թեև առանձին խմբագրությունների որոշ ձեռագրեր ալել կամ պակաս հատվածներով շեղվում են մյուսներից, բայց հայերեն թարգմանությունը համապատասխանում է բոլոր վեց խմբագրություններին<sup>62</sup>: Հասկանալի է, որ դրանք թվարկելը իմաստ չունի, քանի որ բնագրերի առնչակցությունը պարզելու գործին ոչնչով չի կարող օգնել<sup>63</sup>:

Նշված 39 դեպքերում հայերեն թարգմանությունը 34 անգամ համընկնում է լուկիանյան, 29 անգամ՝ խառը, 24 անգամ՝ որոգիմյան, 23 անգամ՝ արևմտյան, 17 անգամ՝ ստորինգիպտական և 6 անգամ՝

<sup>62</sup> Հմմտ., օրինակ, ԽԺ, 6. Ծ, 9. ՀԺ, 19. ՂԵ, 10. ԾԺԳ, 7. ԾԺԷ, 1 և այլն:

<sup>63</sup> Միակ բացառությունը արված է ԻԴ, 14 համարում, ի նկատի ունենալով այն, որ զարմանալիորեն այստեղ յուրաքանչյուր խմբագրություն (բացի լուկիանյանը) ներկայացված է միայն մի ձեռագրով կամ բնագրով:

վերինեզիպտական խմբագրությանը<sup>64</sup>: Սակայն այս բացարձակ թվերը դեռևս ճշտությամբ չեն արտաբայտում բնագրերի հարաբերակցությունը: Կարևոր ցուցանիշ է նաև այն, թե քանի անգամ է լուրաբանչուր խմբագրություն հանդես եկել միայն մի ձեռագրով կամ բնագրով: Նման դեպքերում շատ հավանական է, որ մենք գործ ունենք ոչ թե տվյալ խմբագրությանը հատուկ, այլ մի ուրիշ խմբագրությունից փոխանցված պատահական ընթերցվածի հետ: Հունական խմբագրություններում մեկ ձեռագրով կամ բնագրով վկայված ընթերցվածները բաշխվում են հետևյալ կերպ. լուկիանյան՝ 84 դեպքից 2-ը, խառը՝ 29-ից 10-ը, որոզիմյան՝ 24-ից 19-ը, արևմտյան՝ 28-ից 8-ը, ստորինեզիպտական՝ 17-ից 9-ը, վերինեզիպտական՝ 6-ից 6-ը: Ինչպես տեսնում ենք, այս տեսակետից առավել ևս մյուս խմբագրությունները չեն կարող համեմատվել լուկիանյանի հետ: Եթե նույնիսկ նշված երկու ընթերցվածները (ԺԷ, 14. ԾԺԸ, 104) լուկիանյան խմբագրությանը անհարազատ համարենք, միևնույն է, դա էապես չի խախտի բացարձակ թվերի հարաբերակցությունը, Ընդ որում, կարելի է բացատրություն գտնել նաև այն դեպքերի համար, երբ հայերեն թարգմանությունը շեղվում է լուկիանյան բնագրից և համընկնում այլ խմբագրությունների (ԻԵ, 1. ԿԱ, 9. ՀԱ, 19. 2, 1. ԾԺԸ, 56):

ԻԵ, 1 և ՀԱ, 19 համարներում հայերեն թարգմանությունը մեկուսի համընկել է որոզիմյան բնագրերին, ամենայն հավանականությամբ, ոչ թե ուղղակի կապի, այլ իրարից անկախ մանակության շնորհիվ<sup>65</sup>: ԿԱ, 9 համարի «յաիտեանս ժամանակաց» ընթերցվածը հայերեն թարգմանությունը կարող էր ստացած լինել Պեշիտտայից<sup>66</sup>: ԾԺԸ, 56 համարի «ճանապարհ ի կեանս» բառերը, որոնք հայերեն թարգմանությունից բացի առկա են միայն խառը խմբագրության մի ձեռագրում, հնարավոր է, որ եղել են նաև լուկիանյան բնագրում, քանի որ, ինչպես նշվեց, խառը խմբագրությունը հարում է վերջինիս<sup>67</sup>: Դժվար է բացատրել միայն հայերեն թարգմանության և ոչ լուկիանյան երեք բնագրերի ընդհանրությունը 2, 1 համարում:

Այսպիսով, դատելով միայն հավելյալ հատվածների համեմատությունից, սաղմոսների հայերեն թարգմանությունը սերտ կապի մեջ է գտնվում լուկիանյան խմբագրության հետ:

Նույն արդյունքն է ստացվում նաև այն ժամանակ, երբ հայերեն թարգմանությունը ուսումնասիրում ենք Յոթանասնից բնագրի բառային տարընթերցվածների համեմատությամբ: Ավելելորդ ծանրաբեռնումից խուսափելու նպատակով ստորև նշում ենք միայն բնա-

գրերի ամենաէական տարընթերցվածները, այսինքն այն դեպքերը, երբ հայերեն թարգմանությունը համապատասխանում է առավելագույնը երեք հունարեն խմբագրության<sup>68</sup>: Մեր պրպտումները թույլ են տալիս պնդել, որ այս թիվը մեծացնելու դեպքում էլ հայերեն թարգմանության և հունարեն խմբագրությունների հարաբերակցությունը էապես չի փոխվի:

- Ե, 13=1 Ն\* Պ. չիք ամենայն:
- Զ, 11=Ս\* Լ Ն\*. կա լետս:
- Է, 8=Լ. կա Տեր:
- Թ, 14=Ա Ն. ցաւ փխ վաստակս:
- Թ, 16=Լ Պ. թագաւոր փխ թագաւորեացէ:
- ԺԵ, 2=Ս\* Պ. Աստուած փխ Տեր:
- ԺԷ, 40=Ս\* Ա Ո Պ. չիք զամենայն:
- ԺԸ, 7=Ա Ո\*. Տորուն փխ երկնից:
- ԺԹ, 18=Ս\* Վ Ա. կա Տեր:
- ԺԹ, 4=Լ\* Ն Պ. կա Տեր:
- ԻԱ, 29=Վ Ա\*. կա ամենայն:
- ԻԴ, 21=Ս\* Ա\* Ո Պ. չիք Տեր:
- ԻԵ, 11=Լ Ն. կա Տեր:
- ԻԶ, 6=Վ Լ Պ. օրհնութեան փխ աղաղակի:
- ԻԶ, 9=Վ Լ Ն. մի անարգել: փխ մի անտես անը:

- ԼԱ, 3=Ա. կա ամենայն:
- ԼԱ, 5=Ս\* Վ. զմեղս փխ զանօրէնութիւնս:
- ԼԱ, 5=Ո\* Լ Պ. մեղաց փխ արտի:
- ԼԲ, 5=Լ Ն. կա Տեր:
- ԼԳ, 21=Ս Ա Ո\* Պ. չիք Տեր (1-ին):
- ԼԴ, 12=Ա Լ Ն Պ. բարոյ փխ գեղոյ:
- ԼԴ, 18=Ո\* Ա. մեծ փխ բազումս:
- ԼԴ, 27=Ս\*. Աստուած փխ Տեր:
- ԼԶ, 18=Ս\* Ո\* Ն\* Պ. զաւորս փխ զճանապարհս:
- ԼԶ, 23=Ս\* Պ. առն փխ մարդոյ:
- ԼԶ, 23=Ա\* Լ Ն. կա լոյժ:
- ԼԶ, 28=Ա Ո\* Լ Ն. անօրէնք փխ անքիծք:
- ԼԶ, 28=Ա\* Լ Ն. հալածեացին փխ խնդրեացին վրէժք նոցա:

- ԼԷ, 8=Ս Վ Ա\*. անձն փխ փորք:
- ԼԸ, 4=Արար. թարգմ. կա և ասացի:
- ԼԸ, 12=Ս\* Լ Ն Պ. չիք խոսվի:
- ԼԹ, 7=Ա\* Ո\* Պ. լսելիս փխ մարմին:
- ԼԹ, 9=Ս Լ Ն Պ. որովայնի փխ արտի:
- ԼԹ, 15=Ա Լ Ն. ամաչեսցին փխ պատկառեսցին:
- ՆԱ, 3=Ո\* Լ Ն. կա հօրք:
- ՆԱ, 9=Ո\* Լ Ն Պ. զօրհնութիւն փխ յայտնի ատնէ:
- ՆԱ, 11=Լ Ն Պ. թշմամիք փխ նեղիչք:
- ՆԵ, 6=Ո\* Լ Ն. կա ի վաղորդայնէ:

<sup>64</sup> Պեշիտտային՝ 24 անգամ:

<sup>65</sup> Հմմտ. տույն աշխատության «Նմանակություն» դրվագը:

<sup>66</sup> Տե՛ս մանրամասն «Հայերեն թարգմանությունը և Պեշիտտան» դրվագը:

<sup>67</sup> Պատահական չէ, որ հայերեն թարգմանությունը լուկիանյանից հետո ամենաշատը համընկնում է խառը խմբագրությանը (29 անգամ):

<sup>68</sup> Չենք նշում միայն սաղմոսների վերնագրերի տարընթերցվածները. (այդ մասին տե՛ս ստորև) և այն դեպքերը, երբ Յոթանասնիցում բառային տարընթերցվածները հոմանիշային բնույթի են, այսինքն հալը և՛ ընթերցվածը, և՛ տարընթերցվածը կարող էր վերարտադրել միևնույն բառով, օրինակ՝ ԼԹ, 17 ասացին = εἰπάτωσαν կամ λεγέτωσαν. ՆԳ, 14 այսպիսով կատակակց = καταγέλωτα կամ χλευασμός. Պ, 15, կարդացել = ἐπιτα λέσεται կամ κερπίζεται և այլն:

- ԽԵ, 9=Վ\* Լ Խ Պ. Աստուծոյ փխ Տեառն:
- ԽԵ, 15=Վ\* Ո\* Խ\* Պ. կա Աստուած (1-ին):
- ԽԸ, 18=Ա Լ Խ. կա տան:
- ԾԲ, 2=Վ. գրադրութիւն փխ գրարի:
- ԾԴ, 9=Լ Խ. կա Աստուծոյ:
- ԾԵ, 3=Լ Խ Պ. չիք ատրց:
- ԾԵ, 5=Ա Պ. մարդ փխ մարմին:
- ԾԵ, 8=Լ Խ. մերժեցես փխ փրկեցես:
- ԾԵ, 13=Ա Լ. Տեառն փխ Աստուծոյ:
- ԾԵ, 13=Լ Պ. լերկրին փխ ի լուսն:
- ԾԶ, 8=Ս\* Լ Պ. կա փառօք իմովք:
- ԾԸ, 6=Խ\*. չիք Աստուած (1-ին):
- ԾԸ, 12=Ո Պ. գծողովորդ փխ զօրէն:
- ԿԲ, 6=Ո\* Լ Պ. բերան փխ աւուն:
- ԿԲ, 12=Ս\* Ա. Տէր փխ Աստուած:
- ԿԴ, 8=Ա\* Լ Խ. կա ցածուցանէ:
- ԿԴ, 9=Ս\*. երկրի փխ ծագաց:
- ԿԴ, 13=Ո\* Լ Խ\*. գեղեցկութիւնք փխ լերինք:
- ԿԷ, 29=Ս Վ\* Լ\* Պ. հաստատեցեր փխ արարեր:
- ԿԸ, 11=Ս Վ\* Խ\* Պ. խոնարհեցուցի փխ ծածկեցի:
- ԿԸ, 30=Ա Ո\* Լ Պ. չիք երեսաց:
- ԿԹ, 5=Ս Վ\* Լ Պ. Աստուած փխ Տէր:
- Հ, 14=Վ\* Պ. չիք զամենայն:
- Հ, 20=Վ\* Լ. չիք դարձեալ:
- ՀԱ, 17=Լ\*. Տեառն փխ նորս:
- ՀԱ, 19=Ս\*, Արար. թարգմ. կա սուրբ:
- ՀԲ, 18=Լ Խ. կա տարագիր (zzz(°)):
- ՀԳ, 5=Ա\* Ո\* Լ. զելս փխ զմուտս:
- ՀԳ, 15=Ս\* Վ\*, Արար թարգմ., Պ. սաստիկս փխ Եթեմմա:
- ՀԵ, 13=Ս\* Վ\*, Արար. թարգմ. կա զամենայն:
- ՀԷ, 33=Արար. թարգմ. կա անցին:
- ՀԷ, 51=Ս Խ\* Պ. չիք լերկրին:
- ՀԹ, 4=Ա\* Լ\* Խ\* Պ. կա զօրութեանց:
- ՀԹ, 8=Վ\* Ո\* Պ. չիք Տէր:
- ՀԹ, 13=Խ\*. չիք ամենայն:
- ՀԹ, 14=Լ Խ Պ. երէ փխ միայն:
- ՁԳ, 6=Ո\* Լ Պ. չիք Տէր:
- ՁԴ, 5=Ա Ո Պ. փրկիչ փխ փրկութեան:
- ՁԵ, 14=Խ\*. կա Աստուած:
- ՁԷ, 19=Ս Վ\* Ա. չիք և մերձաորս:
- ՁԸ, 28=Վ\*, Արար. թարգմ. կա զամենայն:
- ՁԸ, 43=Ո Լ Խ. նեղչաց փխ թշնամեաց:
- ՁԸ, 51=Ա Լ. չիք Տէր:
- ՁԹ, 4=Ա\* Լ Խ. կա Տեառն:
- ՂԳ, 19=Ո\* Լ Խ Պ. չիք Տէր:
- ՂԳ, 28=Ա Լ Խ. կա Տէր:
- ՂԴ, 8=Լ Խ. երկրի փխ աստուծոյ:
- ՂԴ, 7=Ա Ո\*. կա Տէր:
- ՂԷ, 1=Ո\* Պ. չիք Տէր:
- ՂԷ, 5=Ա Լ\* Խ. Աստուծոյ փխ Տեառն:
- ՃԲ, 1=Ա\* Պ. ոսկերք փխ փոր:
- ՃԳ, 1=Լ Խ\*. մեծվայելչութիւն փխ վայելչութիւն:
- ՃԳ, 16=Ս\* Պ. Տեառն փխ անտառի<sup>69</sup>:

- ՃԳ, 19=Արար թարգմ., Պ. կա զժամ:
- ՃԴ, 15=Խ\*, Արար. թարգմ. կա աս:
- ՃԴ, 35=Խ. անդոյ փխ երկրի (\*):
- ՃԵ, 44=Ս\* Լ Խ\*. կա Տէր:
- ՃԷ, 10=Ա Լ Պ. հօգօրիչ փխ օգնական:
- ՃԸ, 9=Լ Խ\* Պ. կա Տէր:
- ՃԾԱ, 4=Ա. կա Տէր:
- ՃԾԳ, 13=Ս Լ Խ Պ. չիք զամենայն:
- ՃԾԴ, 6=Վ\*. կա Տէր:
- ՃԾԷ, 4=Ս\* Ո\* Պ. չիք ամենայն:
- ՃԾԷ, 12=Ա\* Ո\* Պ. չիք զկողմիս:
- ՃԾԷ, 24=Վ\*, Արար. թարգմ., Պ. կա եկայք:
- ՃԾԷ, 28=Ս\* Ա Խ\*. կա Տէր:
- ՃԾԸ, 6=Վ\*. չիք յամենայն:
- ՃԾԸ, 7=Ս Ա Խ. կա Տէր:
- ՃԾԸ, 47=Ա\* Ո Պ. չիք լոյժ:
- ՃԾԸ, 85=Վ\* Ո\* Պ. չիք Տէր:
- ՃԾԸ, 97=Ո\* Պ. չիք Տէր:
- ՃԾԸ, 149=Լ\*. կա Տէր:
- ՃԾԸ, 168=Ս\* Ո\* Լ\*. չիք Տէր:
- ՃԾԸ, 170=Ա Լ Խ. կա Տէր:
- ՃԾԹ, 7=Ա\* Պ. չիք ի տարապարտոց:
- ՃԻԲ, 1=Վ\*, Արար. թարգմ., կա Տէր:
- ՃԻԶ, 5=Ս\* Լ Խ. չիք մարդոյ:
- ՃԻԷ, 2=Ա\* Ո\* Պ. կա ձեռաց:
- ՃԻԷ, 4=Ա Լ. կա ամենայն:
- ՃԼԱ, 9=Լ Խ\*. կա ցնծալով:
- ՃԼԴ, 1=Ս\* Վ\*, Արար. թարգմ., կա Տեառն:
- ՃԼԴ, 3=Ա Պ. չիք Տէր:
- ՃԼԴ, 8=Վ. կա զամենայն:
- ՃԼԴ, 9=Արար. թարգմ., զօրս փխ ծառաց:
- ՃԼԵ, 24=Ս Ա, Արար. թարգմ. կա ի ձեռաց:
- ՃԼԷ, 4=Վ\* Պ. չիք զամենայն:
- ՃԼԸ, 5=Վ\*. չիք զամենայն:
- ՃԼԸ, 13=Ո\* Լ Խ\* Պ. չիք Տէր:
- ՃԼԸ, 14=Ս\* Ա Լ\*. կա Տէր:
- ՃԽԲ, 8=Լ. կա Տէր:
- ՃԽԶ, 10=Արար. թարգմ., Պ. կա Տէր:
- ՃԾՍ, 3=Ս\* Ա\* Ո\*. կա ամենայնի:

Հայերէն թարգմանությունը թվարկված 130 դեպքերում 63 անգամ համընկնում է լուկիանյան խմբագրությանը, որոնցից յոթում վերջինս ներկայացված է մեկ ձեռագրով կամ բնագրով: Այնուհետև ըստ համապատասխանությունների հաճախականության զալիս են՝ խառը (53 անգամ. 18-ը մեկ ձեռ. կամ բնագր.), արևմտյան (47 անգամ. 17-ը մեկ ձեռ. կամ բնագր.), ստորինգիպտական (35 անգամ. 24-ը մեկ ձեռ. կամ բնագր.), որոգինյան (34 անգամ. 28-ը մեկ ձեռ. կամ բնագր.) և վերինգիպտական (28 անգամ. 20-ը մեկ ձեռ. կամ բնագր.) խմբագրությունները<sup>70</sup>: Ինչպես տեսնում ենք, այս ցուցանիշով ևս հայերէն թարգմանությունը ամենաշատ համապատասխանու-

№ 180) սկզբնապես, ըստ երևույթին, հայերէն մյուս ընդօրինակությունների նման, եկել է տն, որը սակայն այժմ ջնջված է:

<sup>70</sup> Պեշիտտային հայերէն թարգմանությունը համընկնում է 57 անգամ:

<sup>69</sup> Ոսկանը, վերցնելով լատինական բնագրից, իր փրատարակության մեջ դրել է անտառի ընթերցվածը: Երա օգտագործած ձեռագրում (Մատենադարան,

թյուններ ունի լուկիանյան խմբագրության հետ: Ուստի բնական է ենթադրել, որ սաղմոսների հայե-  
րեն թարգմանության սկզբնագիրը Յոթանասնից  
բնագրի լուկիանյան խմբագրությունն է: Սակայն  
այս ենթադրությունը համոզիչ դարձնելու համար  
պետք է կարողանալ բացատրել, թե ինչու մնացած  
87 դեպքերում հայերեն թարգմանությունը շեղվում է  
լուկիանյան բնագրից: Ծեղումների մի զգալի մասը  
բացահայտորեն արդյունք է մտամակության, այսինքն  
այն բանի, որ հայերեն թարգմանությունը և նրան  
համապատասխանող բնագրերը իրարից անկախ են-  
թարկվել են սաղմոսների նույնամասն հատվածների  
ազդեցությամբ: Դրանք են՝ ԼԱ, 3 (ԻԱ, 15, 18-ից).  
ԼԴ, 18 (ԻԱ, 28-ից). ԼԴ, 27 (ԿԹ, 5-ից). ԾԲ, 2  
(ԺԳ, 1, 8-ից). ԾԵ, 5 (ԾԵ, 12-ից). ԿԲ, 12 (Ի,  
8-ից). ՀԱ, 19 (ԼԲ, 21. ՀԳ, 10, 18, 21-ից). ՁԵ, 14  
(ԾԳ 5-ից). ՂԷ, 5 (ԽԶ, 7-ից)<sup>71</sup>. ԾԺԴ, 8 (ԾԺԴ,  
6-ից). ԾԺԷ, 24 (ՂԴ, 1-ից). ԾԺԸ, 28 և ԾԺԹ, 7  
(ԾԺ, 1. ԾԼԷ, 1-ից). ԾԻԲ, 1 (ԻԴ 1. ՁԵ, 4-ից). ԾԼԴ,  
1 (ԾԼԳ, 1-ից). ԾԼԴ, 8 (ՀԷ 51-ից). ԾԼԴ, 9 (ԾԼԵ,  
15-ից). ԾԼԵ, 24 (ԺԶ 14. ԽԳ, 8. ԾԶ, 2-ից). ԾԼԸ,  
14 (ԾԺ, 1. ԾԼԷ, 1-ից)<sup>72</sup>: Հաշվից պետք է հանել,  
ըստ երևույթի, նաև այն դեպքերը, երբ հայերեն  
թարգմանությունը համապատասխանում է ոչ լու-  
կիանյան բնագրերին՝ ՏԷր և ամենայն բաների առ-  
կայությանը կամ բացակայությանը. է, 8<sup>72</sup>. ԺԷ 40.  
ԺԸ, 18. ԺԹ, 4<sup>72</sup>. ԻԱ, 29. ԻԴ, 21. Հ, 14. ՀԱ, 17<sup>72</sup>.  
ՀԵ, 18. ՀԹ 8, 18. ՁԸ 28. ՂԷ, 1. ԾԺԱ, 4. ԾԺԷ 4.  
ԾԺԸ, 6, 85, 97, 188<sup>72</sup>. ԾԼԴ, 8. ԾԼԷ, 4. ԾԼԸ, 5.  
ԾԽԶ, 10: «Խուսափում կրկնությունից» դրվագում  
տեսանք, որ հայերեն թարգմանությունը ազատ է  
վարվում այդ բաների գործածության հետ և, հետևա-  
բար, դրանք չեն կարող կոպան հանդիսանալ բնա-  
գրերի կապը բացահայտելու գործում: Եվ վերջապես,  
«ոչ լուկիանյան» ընթերցվածներից մի քանիսը հա-  
յերեն թարգմանությունը կարող էր ստանալ խառը  
խմբագրությունից և, ինչպես կտեսնենք հաջորդ դր-  
վագում, Պեշիտոսայից: Այնուամենայնիվ որքան էլ  
բացատրություններով կրճատենք լուկիանյան բնագրից  
շեղվող և մյուս խմբագրություններին համապատաս-  
խանող հայերեն ընթերցվածները, միևնույն է, մնում  
են որոշ դեպքեր, որոնք այլևս հայերեն թարգմանու-  
թյան առանձնահատկություններով հնարավոր չէ  
բացատրել: Ուստի առավել քան բնական է Հ. Անաս-  
յանի կարծիքը «մեր ընկալյալ բնագրում հունարեն  
սկզբնագրի հետքերի» անմիատարրության մասին,  
ըստ որի՝ «...կամ մեր թարգմանիչներն իրենց ձեռքի  
տակ միաժամանակ ունեցել են նաև տարբեր բնա-  
գրեր, կամ էլ թարգմանությունների վրա հետագա-  
յում ուղղումներ են կատարվել տարբեր բնագրերի

հետևողությամբ: Ավելի հավանական է այս վերջի-  
նը»<sup>73</sup>: Սակայն այս տեսակետը որոշ լրացում է պա-  
հանջում: Նախ, հունական խմբագրություններն ի-  
րենք էլ միատարր չեն. հաճախ է պատահում, որ  
միևնույն խմբի որոշ ձեռագրեր շեղվում են իրենց  
մայր-օրինակից և համընկնում այլ խմբագրությու-  
նների: Երկրորդ, մեզ ճշտությամբ հայտնի չեն հու-  
նարեն խմբագրություններն իրենց նախնական տես-  
քով, քանի որ նրանք հետագայում ենթարկվել են  
փոփոխությունների. լուկիանյան բնագիրն էլ ժամա-  
նակի ընթացքում որոշ չափով կորցրել է իր դեմքը<sup>74</sup>:  
Երրորդ, որ մասնավորապես չափազանց կարևոր է,  
սաղմոսների լուկիանյան խմբագրության ձեռագրերի  
մեծ մասը դեռևս չի դրված գիտական շրջանառու-  
թյան մեջ<sup>75</sup>: Այսպիսով, երբ հայերեն թարգմանությու-  
նը շեղվում է մեզ հայտնի լուկիանյան բնագրից և  
համընկնում այլ խմբագրությունների, դա դեռևս չի  
նշանակում, որ մենք գործ ունենք ոչ լուկիանյան ըն-  
թերցվածի հետ:

Հայերեն թարգմանության մեջ «հետագայում տար-  
բեր բնագրերի հետևողությամբ ուղղումներ» կատա-  
րելու ապացույցը գուցե պետք է փնտրել այնտեղ,  
որտեղ հայերեն ընթերցվածությունները պարունա-  
կում են հունարեն սկզբնագրի և՛ ընթերցվածը, և՛  
տարբերթերցվածը: Այսպես.

- Ը, 7. ձեռակերտաց<sup>76</sup> (Ձ ոմանք՝ ամենայն ձեռա-  
կերտաց):
- Թ, 18. գաղօթս (Ձ ոմանք՝ գաղաղակ):
- ԺԳ, 1, 3. գբաղցրութիւն (Ձ ոմանք՝ գբարի):
- ԺԳ, 6. ՏԷր (Ձ ոմանք՝ Սատուած):
- Ի, 5. յաիտեանս յաիտենից (Ձ ոմանք՝ յաիտե-  
անս և յաիտեանս յաիտենից):
- ԻԷ, 4. ՏԷր (Մատենադարան, ձեռ. 195՝ չիք):
- ԻԸ, 11. ՏԷր (Ձ ոմանք՝ չիք):
- ԽԴ, 8. գամօրէնութիւն (Մատենադարան, ձեռ.  
142՝ գամիրաութիւն):
- ԿԹ, 5. ՏԷր (Ձ ոմանք՝ չիք):
- Հ, 18. պատկառեսցեն (Ձ ոմանք՝ պակասեսցեն):
- ՀԱ, 12. ի ձեռաց (Ձ ոմանք՝ չիք):
- ՀԸ, 8. ՏԷր (Ձ ոմանք՝ չիք):
- ԾԳ, 24. ստեղծուածք (Ձ ոմանք՝ ստացուածք):
- ԾԷ, 8. բարձր եղէց (Ձ ոմանք՝ ցնծացաց, բարձր  
եղէց)<sup>77</sup>:
- ԾԺԷ, 3. գի բարի է (Ձ՝ չիք, 1860 և 1895 թթ.  
հրատ.՝ կա):
- ԾԺԸ, 64. քով ՏԷր (Ձ ոմանք՝ Տեան):
- ԾԺԹ, 151. պատուիրանք (Ձ ոմանք՝ ճանապարհք):

<sup>71</sup> Թեև այս երկու ընթերցվածները կան նաև լու-  
կիանյան մեկական բնագրերում, բայց նույնպես, ըստ  
երևույթի, նմանակությամբ:

<sup>72</sup> Այս չորս ընթերցվածները չնայած համապա-  
տասխանում են նաև լուկիանյան հատուկենտ բնա-  
գրերի, այնուամենայնիվ կարող են անմիջական կա-  
պի արդյունք չլինել:

<sup>73</sup> Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 80:

<sup>74</sup> Rahfs, S. 69.

<sup>75</sup> Անդ, S. 61.

<sup>76</sup> Ընդգծված են այն ընթերցվածները, որոնք մեր  
կարծիքով հայերեն թարգմանության համար նախնա-  
կան են. եթե ընթերցվածը չի ընդգծված, նշանակում  
է նախնական ենք համարում փակագծի միջինը:

<sup>77</sup> Այստեղ հայերեն որոշ ընթերցվածություններում  
հունարեն բնագրի ընթերցվածը և տարբերթերցվածը  
դրված են կողք-կողքի:

ԸՄԻ, 13. լամենայն (Մատենադարան, ձեռ. 142՝ չիք):

ԸՄԱ, 4. Ի հօտէ (Մատենադարան, ձեռ. 142՝ չիք): Այստեղ էլ, իհարկե, պետք է հաշվի առնել, որ տարբերքը վածների մի մասը հունարեն և հայերեն ընդօրինակությունները իրարից անկախ կարող էին մասնակությամբ փոխանցել սաղմոսների այլ հատվածներից, ինչպես, Ը, 7 (Ը, 8-ից). ԺԳ, 1, 3 (ԾԲ, 2, 4-ից). Զ, 13 (ԿԹ, 3-ից). ԾԳ, 24 (ԾԴ, 21-ից). ԾԺԷ, 3 (ԾԺԷ, 2, 4-ից): Անուշադրության չպետք է մատնել նաև հայերեն թարգմանության մեջ Տեր և ամենայն բառերի գործածության առանձնահատկությունը. ԻԷ, 4. ԻԸ, 11. ԿԹ, 5. ԼԸ, 8. ԾԺԸ, 64. ԸՄԻԿ, 13: Մնացած դեպքերում հնարավոր է, որ առանձին ընդօրինակությունների հեղինակներ իսկապես ուղղումներ են կատարել ըստ իրենց ձեռքի տակ եղած հունարեն քննարկի: Բայց ինչպես տեսնում ենք, այդ ուղղումները ոչ թե հետևողական խմբագրական աշխատանքի արդյունք են, այլ սաղմոսների հայերեն քննարկի ամբողջական տեսքի վրա չազդող պատահական փոփոխություններ<sup>76</sup>:

Կան տեղեկություններ այն մասին, որ սաղմոսների հայերեն թարգմանության վրա ԺԲ դարում ինչ-որ աշխատանք է կատարել Հովհաննես Սարկավազ Իմաստասերը: Այդ է վկայում, օրինակ, հետևյալ ձեռագրական հիշատակարանը. «Այս Սարկավազ՝ այր սուրբ և տեսող և գուարթերես՝ լի հոգով... սա վըշտացել էր ի քազում ժամանակս վասն այլալմանս Սաղմոսիս. և ոչ գիտեր զելս իրացն թէ ուստ ուստեք ճշգրտեսցէ. և սպա մտեալ ի յարկելս գրեանն որ ի Հաղթատ՝ զամենայնն որոնեաց. և սպա հուսկ քան զամենայն գրեանն ի ներքոյ՝ եգիտ թարգմանչազիր սաղմոսարան ջինջ և նուազ գրով. և առեալ զայն խնդրութեամբ՝ համբուրեաց, և եղ ի վերայ աչաց իրոց. և սպա արկեալ ձեռն ի գործ՝ բացալստեսց անտի զծածկեալ գանձն և զխցեալ աղբիւրն. և ցրուեաց ընդ ամենայն սահմանս Հայաստանեայց զայս օրինակ<sup>77</sup>: Այնհայտ է, որ Հովհաննես Իմաստասերի կատարած աշխատանքը ոչ թե խմբագրական բնույթի է եղել, այլ նպատակ է ունեցել անաղարտ պահել սաղմոսների հայերեն թարգմանության սկզբնական քննարկը:

Հետևողական խմբագրական աշխատանքի հետքեր նկատվում են միայն սաղմոսների վերնագրերում: Այսպես, օրինակ, Ե, 1 համարում վիճակեցոց բառի փոխարեն Զոհրապյանի ձեռագրերից ոմանք ունեն ժառանգաւորաց, որի ի հայտ գալը հնարավոր չէ բացատրել ոչ գրչականորեն, ոչ էլ նմանակությամբ: Պարզապես հետագայի մի խմբագիր, շոհ շէրոսոս-բօսոսի բառի սկզբնական թարգմանությունը սխալ

<sup>76</sup> Հասկանալի է, որ հետագայում՝ սաղմոսների հայերեն մյուս ընդօրինակություններն ուսումնասիրելիս, կարող են ևս մի շարք այսպիսի դեպքեր բացահայտվել:

<sup>77</sup> Չ. Զարբհանայան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեսց, Վենետիկ, 1889, էջ 219:

համարելով, ուղղել է ժառանգաւորաց: Նույն բանը կատարվել է նաև հետևյալ վերնագրերում. Լ, 1 շէրոսոսոս—ճահատակութիւն գովութեան, 2 ոմանք՝ զարմացման. ԿԸ, 1 տօն շէրոսոսոսոս—զառանցեցոց, 2 ոմանք՝ փոփոխմանց. ԸԱ, 1 տօն բաշտօն—ուրկի, 2 ոմանք՝ աղբատի. ԾԺԱ, 1 շոհ շէրոսոսոսի—սպաշխարութեան, 2 ոմանք՝ վերադարձութիւն. ԾԺԹ, 1—ԸԼԳ, 1 օծոյ—օրհնութիւն, 2 ոմանք՝ երգ. ԸԼ, 1—ԸԼԳ, 1 շէրոսոսոս—աշտիճանաց, 2 ոմանք՝ շուրջ<sup>80</sup>: Մատենադարանի № 195 ձեռագրում նույնիսկ տեղ է գտել հունարեն շէրոսոս բառի փառաբան տառադարձությունը՝ սաղմոս-ի փոխարեն (ԸԸ, 1): Բացահայտ խմբագրական միջամտությամբ որոշ ընդօրինակություններ մի շարք վերնագրերում բաց են թողել զուտ լուկիանյան «անվերնագիր ի հեքրայեցոց» (ἀνεπίγραφος πρὸ ἀρχαίου) ընթերցվածը. տե՛ս ԼԲ, 1. Ը, 1. Ը, 1. ԸԲ, 1. ԸԳ, 1. ԸԴ, 1. ԸԵ, 1. ԸԶ, 1<sup>81</sup>. ԸԼԶ, 1: Այնուամենայնիվ որքան էլ սաղմոսների վերնագրերը խմբագրված լինեն, ձեռագրերում պահպանված նախնական ընթերցվածները վկայում են, որ նրանք նույնպես իրում են լուկիանյան խմբագրությունից: Վերը, հունարեն սկզբնագրի բառային տարբերակները քննելիս, մենք գիտակցաբար ընդգրկեցինք վերնագրերի նյութը, քանի որ վերջիններս զգալի փոփոխություններ են կրել նաև նմանակության հետևանքով: Եթե համենայն դեպս համեմատենք նաև վերնագրերի բառային տարբերակները, միևնույն է, կտեսնենք, որ այստեղ էլ հայերեն թարգմանությունը որպես կանոն համընկնում է լուկիանյան խմբագրությանը<sup>82</sup>:

Այսպիսով, թվում է, բերված փաստերից կարելի է հանգել միայն մի եզրակացության, որ սաղմոսների հայերեն թարգմանության սկզբնագիրը Յորթանասնից քննարկի լուկիանյան խմբագրությունն է: Այս իրողությունը, ըստ երևույթին, պարզ է եղել Ա. Ռալֆսի՝ սաղմոսների հունարեն քննարկի հրատարակչի համար, քանի որ նա, տողատակը չծանրաբեռնելու պատճառաբանությամբ (պետք է հիշել, որ այստեղ լուկիանյան խմբագրությունը առանց այն էլ ներկայացված է ամենաշատ ընդօրինակություններով), հայերեն թարգմանությունը չի ընդգրկել իր հրատարակության մեջ<sup>83</sup>: Հայերեն թարգմանության և լուկիանյան

<sup>80</sup> Թերևս շփոթված է շէրոսոսոս բառի հետ:

<sup>81</sup> ԸԳ, 1. ԸԴ, 1. ԸԵ, 1 և ԸԶ, 1 համարներում «անվերնագիր ի հեքրայեցոց» ունեն ոսկանյան հրատարակությունը և նրա հիմք-ձեռագիրը (Մատենադարան, № 180):

<sup>82</sup> Հմտ. ԺԴ, 1. ԼԴ, 1. ԼԶ, 1. ԽԱ, 1. ԽԲ, 1. ԽԸ, 1. Կ, 1. ԿԴ, 1. ՀԱ, 1. ԶԸ, 1. ԸԱ, 1. ԸԶ, 1. ԸԹ, 1. ԸԲ, 1. ԸԻԶ, 1. ԸԼԷ, 1. ԸՄԻԿ, 1:

<sup>83</sup> Rahlfs, S. 16—17: Ընդհանրապես Աստվածաշնչի հայերեն թարգմանության սկզբնագրի վերաբերյալ հայագիտության մեջ արտահայտվել են այնպիսի կարծիքներ: Որպես արդյախին նշվել են լուկիանյան, կեսարյան և նույնիսկ աղեքսանդրյան հունարեն խմբագրությունները:

յան խմբագրության կապը գուցե հիմնավորված է Յոթանասանիցին նվիրված Արա եռափաստոր ուսումնասիրության մեջ, որը դժբախտաբար մեզ անհասանելի մնաց Խորհրդային Միության շրջափակումներում չլինելու պատճառով<sup>84</sup>։ Ինչևէ, հայերեն թարգմանության ընդգրկումով Ռուֆֆիի հրատարակությունը կարող էր միայն շահել, քանի որ անուրանալի է Արա դերը լուկիանյան խմբագրության սկզբնական բնագիրը վերականգնելու գործում<sup>85</sup>։ Դեռևս անցյալ դարի վերջին նուս բանասեր Իվան Եվանևը Եսայու գրքի առթիվ Աշել է. «Ճատ դեպքերում հայերեն թարգմանության ցուցմունքները կարող են վճռական ձայն ունենալ լուկիանյան այս կամ այն ընթերցվածի նախակարգնական տեսքը որոշելու գործում, և հատկապես հունարեն ընդօրինակությունների անհամաձայնության ծանանակ»<sup>86</sup>։ Պատահական չէ, որ Եսայու գրքի Յոթանասանից բնագրի գլխաբանական հրատարակության մեջ հայերեն թարգմանությանը պատշաճ տեղ է հատկացված<sup>87</sup>։

8. ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՇԻՏՏԱՆ

Նախորդ դրվագում արդեն առիթներ ունեցանք աղմուկների հայերեն թարգմանության առանձին ընթերցվածների բացատրության համար դիմելու Աստվածաշնչի առերեսին բնագրի՝ Պեշիտտայի օգնությանը։ Ինչպես տեսանք, երբեմն հայերեն թարգմանությունը հանրակրթական է ոչ լուկիանյան որևէ խմբագրության և Արա կողքին՝ միայն Պեշիտտային։ Համեմատությունը ցույց է տալիս, որ հազվադեպ չեն նաև այն դեպքերը, երբ հայերեն թարգմանությունը և Պեշիտտան մեկուսի հակադրվում են բոլոր մյուս բնագրերին։ Այսպես, հայերեն թարգմանության մեջ չորս անգամ հունարեն *ἀνθρώπων* (= մարդկան) բառի դիմաց դրված է որդուց մարդկան։

ԺԶ, 4. Մի խուսեացի բերանս իմ գործս որդուց մարդկանս։  
 ԿԷ, 19. Առ ասար բաշխեաց պարգևս և ետ որդուց մարդկանս։  
 ԾԺԳ, 4 և ԾԼԳ, 15. Կուրք հերթանասաց... ձեռագործք են որդուց մարդկանս։

μη λαλήσῃ τὸ στόμα μου τὰ ἔργα τῶν ἀνθρώπων  
 ἐλαβες δόματα ἐν ἀνθρώπων (ասար, ἀνθρώποις)  
 τὰ εἶδωλα τῶν ἐθνῶν... ἔργα χειρῶν ἀνθρώπων.

Այս փաստը ուշադրություն է գրավում հատկապես այն պատճառով, որ Աստվածաշնչի հայերեն թարգ-

մանության մեջ հանդիպող որդիք մարդկան բառերի գործածության մնացյալ 48 դեպքերում Յոթանասանիցում ունենք Արանց համարժեքը՝ *οἱ ἀνθρώπων*<sup>88</sup>։ Ընդ որում, դրանցից 22-ը վկայված են աղմուկների բնագրում։ Սա ցույց է տալիս, որ Աշված չորս դեպքերում հայերեն թարգմանությունը կարող էր մարդկան բառի փոխարեն որդիք մարդկան դնել նմանակությանը։ Սակայն հնարավոր է նաև մի այլ, ոչ ավելի անհավանական բացատրություն, եթե հաշվի առնվի առերեսին մարդ բառի կազմության առանձնահատկությունը։ Ասորերենում՝ *նձձձ* բառը մարդ հասկացության վերացական, հստակապես արտահայտությունն է և ինքնուրույն գործածությանը չի կարող տալ որոշակի մարդու գաղափարը։ Դրա համար տեղծվել է Աույն արմատից կազմված *bar-nāšā* (հոգև. *bnay nāšā*) բառարարությունը (= մարդորդի), որն ամբողջությամբ մեջ Աշանկում է մարդ և թարգմանաբար այդպես էլ պետք է վերարտադրվի<sup>89</sup>։ Սակայն բանաստեղծական խոսքում, ինչպես նաև աղմուկներն են, Արա բաղադրիչները կարող են ինքնուրույն Աշանկությունն ենք բերել և թարգմանվել որդիք մարդկան։ Եթե չլինի Աույնի բանաստեղծական խոսքի հանգամանքը, միևնույն է, այդ բառի թարգմանությունը կապված է մեծ դժվարության հետ, քանի որ Պեշիտտայում Աույն *bnay-nāšā* -ն գործածվում է և այն դեպքերում, երբ մյուս բնագրերը ունեն մարդ, և այն դեպքերում, երբ վերջիններս տալիս են որդիք մարդկան։ Ուստի բացատրված չէ, որ հայերեն թարգմանության վերոհիշյալ չորս ընթերցվածները թխում են Պեշիտտայից։ (Շարունակելի)

<sup>88</sup> Երկու անգամ հարկ է զգացվում բացատրությունն առնու։ Եսայու գրքի ԾԲ, 14 համարի «...անշքեացի տեսիլ քո ի մարդկանէ, և փառք քո յորդուց ի մարդկանէ» ընդգծված բառերի փոխարեն Աստվածաշնչի հունարեն հրատարակությունները սովորաբար դնում են *ἀνθρώπων*։ Թվում է, թե այստեղ գործ ունենք Աույն երևույթի հետ, ինչ աղմուկների վերոհիշյալ չորս դեպքերում։ Սակայն Եսայու գրքի գլխաբանական ընթերցման հրատարակության տողատակում Աշված է, որ բազմաթիվ ձեռագրեր ունեն *οἱ ἀνθρώπων* ընթերցվածը։ Եվս մի փաստի հանդիպում ենք Իմաստության գրքի ԺԳ, 11 համարում, որտեղ Աույնպես առաջին հայացքից թվում է, թե հայերեն որդուց մարդկան բառերի փոխարեն հունարենում ունենք միայն մարդկան (*ἀνθρώπων*)։ «...և ի կոտու հերթանասաց այցելութիւն եղիցի, զի ի մէջ Խառնոնյ արարածոց ի գարշտրիւն եղեմ, և ի գայթաղութիւնս որդուց մարդկան»։ Բայց այստեղ հայերեն թարգմանությունը պարզապես աղալալված է՝ որդուց-ը պետք է դարձնել *նոցուց*, քանի որ Յոթանասանիցում (ինչպես նաև բոլոր մյուս բնագրերում) ունենք՝ «...καὶ εἰς σάβδαλα ψυχῆς ἀνθρώπων».

<sup>89</sup> Ասորերեն *bar nāšā* բառը կազմությանը նման է հայերենի աղմուկների բառին, որը Աույնպես ամբողջության մեջ Աշանկում է ոչ թե Աղամի որդի, այլ մարդ։

<sup>84</sup> Septuaginta-Studien, herausgegeben von Alfred Rahlfs, drei Hefte, Göttingen, 1904—1911.

<sup>85</sup> Ռուֆիլը հաշվի է առել հայերեն թարգմանության միայն մի ընթերցված (Ձ, 1)։

<sup>86</sup> Иван Евсеев, *Աշվ. աշխ.*, էջ 21։

<sup>87</sup> Septuaginta, *Vetus Testamentum Graecum*, Bd. XIV: Isaias, ed. Joseph Ziegler, Göttingen, 1939, II Auflage, 1967.

